Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Տիպ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ

Հայտատու՝ Արարատի մարզի Նոյակերտի, Լուսառատի, Եղեգնավանի միջնակարգ դպրոցների միացյալ կառավարման խորհուրդ

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշում

ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի, Եղեգնավանի, Լուսառատի միջնակարգ դպրոցների միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ « Արարատի մարզի Նոյակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը (բնօրինակի հետ),
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով, որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին/,
5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թվականի նոյեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը10:00 -ից մինչև ժամը 15:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, «ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում :

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը՝ 12:00-ին,

«ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գ. Նոյակերտ, Նոյի 29:

Տեղեկությունների համար դիմել Յանա Էլչիյանին, հեռախոս՝ 077 270887

Email: galina-alexa@mail.ru

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Նոյակերտ, Նոյի 29

Հեռ.՝ 093 579731

Էլ.փոստ՝noyakert@schools.am